



ԵՐԿՈՒ ՀԱՏՈՒՆԺ Մ. ՆԱԼԱՆԴԻԵՍՆՑԻ ԱԶԽԱՐՀԱՐԱՌ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵՍՆ ՆԵՐԱ- ԺՈՒԹԻՒՆԻՑ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒՆԺ

(Դրուխ վեցերորդ)



որ լեզուի մշակութիւնը չէ կարելի
առաջ տանել, ստրկանալով հին
լեզուի ոգուն կամ ազդեցութեան,
որովհետեւ նոր լեզունով խօսող
Հայերը ընկած են ուրիշ պատ-
մական և բնական ազդեցութեանց
տակ, քան թէ այն Հայերը, որ
երբեմն խօսել են հին լեզունով:
Աւելորդ է ասել, որ այն պատ-
մական և բնական ազդեցութիւնքը պիտի ցոլանային և
լեզուի վրայ, և այդ ազդեցութիւնքը արդէն իրենց
պաշտօնը կատարելուց յետոյ անհնար է քերել հանել
ազգի վրայից: Ուրիշ խօսքերով ասելով, ինչ պատմական
և բնական պատճառներ ունէր հին լեզուի այնպէս և ոչ
ուրիշ տեսակ կազմութիւնը կամ ձևակերպութիւնը, նոր
լեզուի կազմութիւնը և ձևակերպութիւնը ունի նոյնպիսի

Խմբագրութիւնս բաղդաւոր է համարում իրան, որ շնորհիւ
մեր արդոյ աշխատակից պ. Ե. Շահապէզի, հիւրընկալում ենք
«Լուսնայ»-ի էջերում մեր ամենահամակրելի հեղինակի այս նորա-
գիտ գրուածքը:

Ս. Խ.

պատմական և բնական պատճառք։ Եւ իսպառ ազէտը չէ կարող մերժել այս դրութիւնը, որովհետեւ եթէ այդպիսի պատճառներ չլինէին լեզուն չէր ընկնիլ յեղափոխութեան տակ։ Յայտնի է թէ լեզուն չէ կարող կազմվիլ կամ փոխվիլ մի անհատի կամ խմբի ցանկութեամբ և կամքով, լեզուն որպէս ամբողջ ազգի սեփականութիւն կազմվում է կամ փոխվում է նոյն իսկ այդ ազգի միջնորդութեամբ, որ առանց պատճառի, առանց հարկի, առանց որ և իցէ ազգեցութեան ոչ մի խօսք աւելցնում է և ոչ մի խօսք պակսեցնում կամ այլայլում։ Այլ լեզուի ամեն շարժողութիւնը, դէպի որ կողմը և լինի, լինում է որպէս հետեւանք ներգործող պատճառի. որովհետեւ և տեսանելի առարկաների մէջ, որ ամեն օր մեր աչքի առջևն են շարժողութիւնը ինքը պատճառ չէ, այլ պատճառի հետեւանք։

Այս հիման վրայ, ինչ իրաւունք որ ունէր անտիկեան Հայը խօսել հին լեզուով, հին ոճով, հին բերականութեամբ, նոյն իրաւունքը, իր կարգով ունի և այժմեան Հայը խօսել նոր լեզուով, նոր ոճով և նոր բերականութեամբ։ Մերժել այս իրաւունքը համազօր է պատմութեան և ժամանակի ազդեցութեանցը աբիտանալու. բռնաբարել նոր լեզուն որ նա աճէ հին ձևի ազդեցութեան տակ, համազօր է պատմութեան և ժամանակի ազդեցութիւնքը և իրաւունքը մերժելու։ Մեռածը, մեռած է. անցածը, անցած. կենդանին և ներկան, կենդանի և ներկայ ժողովրդի սեփականութիւնն է, և անխլելի սեփականութիւն։ Մինչև այսօր ոչ մի մեռած մարդ թէև շատ էլ ագահ եղած լինէր իր կեանքում, գերեզմանից դուրս չէ եկել, որ իր ժառանգների իրաւունքը բռնաբարէ և ժառանգութիւնը իր ձեռքը անցնէ։ Եւ մէկ անգամ մեռածը, եթէ դուրս էլ գալու լինի գերեզմանից ժառանգը նորան իբրև օտարոտի մի երևոյթ իբրև մի ճիւղ կը հալածէ, և ոչ միայն ժառանգութիւն այլ և լոկ ընդունելութիւն չի ցոյց տալ, որովհետեւ մեռածը ապրտամբում է բնութեան ընդդէմ, իր գերեզմանից դուրս գալով։

Հին լեզուն անդա՛րձ գնաց, որովհետեւ հին ժամանակները գնացին, և եթէ գնացած չլինէին վաղուց, հին չէր լինէին. ինչ որ մնացել է, նորա պահպանութիւնը, նորա մշակութիւնը և նորան ծաղկեցնելը պիտի լինի ամեն խելքը

դիւին մարդու գործը: Մեռնողին սիրողը պիտի նորա ժառանգին խնամ տանի, սորանից աւելի հղօր ապացոյց չունի նա իր սէրը դէպի մեռածը վկայելու: Իսկ սորա հակառակ ժառանգը թողուլ անխնամ, թերեւս և նախատել և հալածել, և ամուր փաթըթվելով մեռած դիակի հետ երեմիականներ կարդալ, պարզ և յայտնի թշնամութիւն է մեռածին և ոչ սէր, որովհետեւ քո լաց ու սգով նորան չկենդանացնելուց յետոյ, բարոյապէս մեռցնում ես և նորա զաւակը:

Աւերակների բարերը կարող են պիտոյանալ նոր շինուածքի, ինչպէս պահանջում է ժամանակի ճարտարապետութեան ճաշակը: Եւ եթէ այդ բարերից ոմանք փշրվել են, ոմանք մի անկիւնն են կորցրել, ոմանք խոռոչ են ստացել, դու որքան էլ կամենաս չես կարող, որ վերաստեղծես այդ բարերը դէպի իրենց սկզբնական ձևը, քո բոլոր աշխատութիւնը պիտի լինի մնացածը տաշել կոկել և շինուածքին պիտոյացնել: Հազար անգամ էլ որ աշխատես կամ անկիւնը վերականգնել կամ խոռոչը լցնել, զուր պիտի աշխատես, որովհետեւ կարկտանը միշտ կարկտան կմնայ: Ապրող ծառի ճիւղը կարելի է միայն ապրող ծառի վրայ պատուաստել, չորցած ծառի ճիւղը որ կտրես և բերես ապրող ծառըն էլ կտրելով նորա տեղը պատուաստես, կամ ապրող ծառը կտրես ու տանես չորցած ծառի արմատի վրայ պատուաստես, երկու դիպուածումն էլ զուր տեղը կտրեցիր քո ապրող ծառը, որովհետեւ ոչ չոր ծառի ճիւղը պիտի կենդանանայ և զարթի ապրող ծառի վրայ պատուաստվելով, և ոչ թարմ և զարթուն ծառը պիտի աճէ մեքենաբար խրվելով չորցած և անհիւթ արմատի վրայ:

Եւ աւերակի բարերը, եթէ քո դիտաւորութիւնը այն է որ շինուածքը ծառայէ քո իրական պէտքերին, ապա ուրեմն պիտի յարմարվին միմեանց հետ և ամբողջ շինուածքը պիտի կազմեն, իրական պէտքերի յարմար, նոր ճարտարապետութեան կանոններին համաձայն: Իսկ եթէ նոյն բարերով աշխատես դարձեալ երդիկով, առանց պատուհանների և հողէ յատակով տուն շինել, ինչպէս Նախիբ շինում էին հնումը, տունդ կը մնայ դարտակ և ոչ որ չի գնալ որ բնակվի նորա մէջ, որովհետեւ այժմեան ժամանակում անպիտան են այնպիսի տները: Այո՛, կարող ես շինել նաև

նախնեաց շինածի պէս, բայց լոկ մարդու ցոյց տալու 'և հին ժամանակի ճարտարապետութիւնը ուսումնասիրելու համար, ինչպէս Պոմպէյի աւերակներում վերականգնեցին բանաստեղծի ասված տունը, կամ ինչպէս առհասարակ փորում են և բացում են թէ Պոմպէյի և թէ Հերքուլանումի տները, բայց նոքա միշտ կը մնան անմարդաբնակ, որովհետեւ ներկայ հայեացքով և ներկայ պէտքերին նայելով, նեապոլսի և Պորտիչիու տները աւելի գեղեցիկ, աւելի հոյակապ և աւելի յարմար են բնակութեան, քան թէ այն տունը, ուր Քրիստոսի 79 թուականին վերջին անգամ ճաշ կերաւ երեց Պլինիոսը:

Հնութեան աւտորիտետը ժամանակի և պէտքերի իրաւունքը յափշտակելու չափ ուժ չունի: Մեր խօսքը սիրահար մարդու վրայ չէ. սիրահարը օրէնք և իրաւունք չէ նայում, նա ճգնում է միայն իր սիրածին հասնել. Աստուած բարի ճանփայ տայ: Ամբողջ աշխարհը չէ կարող իր ամեն բանը ուրանալ և նորա սիրականի ետեւից վազել, ինչպէս սիրահարը վազում է. որովհետեւ բաղմութիւնը աւելի առողջ է, քան թէ սիրահարը, որ մաշվում է սէրի ախտով:

Հին լեզուի ջատագովեալ գեղեցկութիւնը, նորա աւելի մշակված լինելը, նոյնպէս իրաւունք չեն տալիս մեզ, կենդանի ժողովրդի իրաւունքը բռնաբարելու և ուրանալու ոչ միայն բնութեան տեղական (ethnographique) ազդեցութիւնքը, այլ և պատմական դէպքերը, որ անցան մեր ազգի գըլխից: Ուրանալով այս դէպքերը պիտի անշուշտ հաւասարեինք մեր անձը այն չնաշխարհիկ եպիսկոպոսին, որ իր սքանչելի տրամաբանութեամբ ապացուցանում էր, թէ նապոլէօն առաջինը եղած չէ աշխարհի երեսին:

Գեղեցկութիւնը իրաւունք չէ: Աշխարհիս երեսին ոչ դրական գեղեցիկ կայ և ոչ դրական գեղեցկութիւն. ամեն բան կախվում է այն կէտից ինչ կէտից նայում ես առարկայի վրայ: Ամեն բան կախվում է չափից. չափի միակն է, որ չափում է տարածութիւնը: Տարածութիւնը ըստ ինքեան ոչ մեծ է և ոչ փոքր. մինչև որ մի ուրիշ նորանից մեծ կամ նորանից փոքր բանի հետ չբաղդատվի և այդ

բաղդատուութեամբ չափողի և չափվողի յարաբերութիւնը
չնշանակվին:

Գեղեցկութեան մօտաւոր սահմանը, բնութեան մօտ
լինելը կամ բնութեան նմանելն է ասացին. այստեղ բնու-
թիւնը ուրեմն ստացաւ դարձեալ չափի պաշտօնը. ուրեմն
և լեզուի գեղեցկութիւնը պիտի չափվի բնութեան չափով:
Բայց մարդկային խօսքը կամ նորա ձևը անտեսանելի և
մտքով միայն հասկանալի բան է. ինչպէս ուրեմն կարելի է
որ երևելի բնութիւնը նորան չափ դառնայ: Մենք արդէն
խօսած ենք բնութեան ազդեցութեան մասին, բայց և այս-
տեղ վերստին ասում ենք, որ լեզուի վերաբերութեամբ
միտքն է բնութիւնը. լեզուի ձևի վերաբերութեամբ մտքի
ձևն է բնութիւնը: Պատճառ, միտքը և նորա ձևը կերպա-
րանագործւում են մարդու մէջ բնութեան ազդեցութեամբ
կամ անմիջապէս, կամ կեանքի միջնորդութեամբ, որ առա-
ջանում է բնական պայմանների վերայ: Ինչպէս բնութիւնն
է, ինչպէս մարդու շրջապատող աշխարհն է, այնպէս կը
լինի և մարդուն կեանքը և ինչպէս կեանքը, նորան համե-
մատ կը լինի միտքը: Եւ լեզուն, որ ուրիշ բան չէ եթէ ոչ
մտքի յայտարարը բնականապէս պիտի նմանի մտքին, նորա
ձևը ուրիշ բան չէ կարող լինել և չը պիտի լինի, եթէ ոչ
մտքի ձևի ցոլացումը: Սորանից պարզ երևում է, որ գե-
ղեցկութիւն խօսքը, լոկ անզօր խօսք է եթէ գործ է դր-
ւում: Հին լեզուի իրաւունքը ջատագովելու համար: Անշուշտ,
այն գեղեցկութիւնը, որի մասին մենք խօսեցանք, այսինքն
յարաբերաբար դրական գեղեցկութեան տեղ առնվածը, այլ
է մի ուրիշ գեղեցկութիւնից, որ ամենւին բան չունի բնու-
թեան հետ, այլ կախվում է միայն ճաշակից, սովորութիւ-
նից և հասկացողութիւնից. ուստի և ամեն օր փոփոխու-
թեան է ենթարկվում: Անցեալ տարուայ գեղեցիկը այսօր
է ագեղ լինում. իսկ այսօրվայ գեղեցիկը առաջիկայ տա-
րում: Սորա պարզ և շօշափելի օրինակը թերևս շորերի վը-
րայ տանք: Տասը տարի առաջ, թողնում եմ դարերով ա-
ռաջինները, մեր հագած շորերը որ շատ գեղեցիկ էին թը-
ւում մեզ, այսօր մարդ չկայ որ հագնի. և եթէ ծակ ու
ծուկից մի մարդ դուրս էլ է գալիս այն շորերով ինչպէս
ագեղ է երևում մեզ: Տարակոյս չկայ, շորը նոյնն է, ինչ

որ տասը տարի առաջ շատ գեղեցիկ էր երևում և մենք էլ էինք հագնում, հիմի ինչ եղաւ, որ նոյն շորը շարժում է մեր ծիծաղը. և ոչ մինչև այսչափ, այլ շատ անգամ և զզուանքը եթէ բաց աչքով տեսնում ենք շորի նոյնութիւնը, նորա անփոփոխութիւնը, ինչպէս էր տասը տարի առաջ, ապա ուրեմն այն ժամանակվայ գեղեցկութեան և ներկայ ագեղութեան պատճառները պիտի փնտռենք մեր մէջ: Որովհետեւ եթէ երկու բանի նախնի յարաբերութիւնը փոխվել է, հարկ է թէ այդ բաներն են փոփոխութեան են. թարկվել, և որովհետեւ պատկերները մեր աչքը և յիշողութիւնը մեղ վկայում են, որ շորը չէ փոխվել, ապա ուրեմն մենք ենք փոխվողը, այսինքն մեր հայեացքը, Հայեացքը մի կախարդական դիտակ է, որի մէջ ճաշակի, սովորութեան, հասկացողութեան, և ժամանակի ապակիքը վարում են ամենամեծ պաշտօնը. միևնոյն բանը ցոյց են տալիս մեղ առաջ գեղեցիկ, ներկում են նորան զանազան հրապուրիչ գոյներով, յետոյ ասես թէ աչքից ձգելով կամ բարկանալով այդ բանի վերայ, այնպիսի գարշելի կերպարանքով և տգոյն ներկերով ներկում են, որ մենք հրաժարվում ենք նորանից: Եւ այս խաղը խաղում է դիտակը միևնոյն բանի հետ երբեմն և բանի մի անգամ. այսինքն մեղ ագեղ երևեցնելուց անարգել տալուց ետքը, մի անհասկանալի կամապաշտութեամբ, վերստին հաշտվում է այն բանի հետ և սկսում է վերստին կախարդել մեր աչքը:

Յայտնի է թէ, հին լեզուի գեղեցկութեան իրաւունքը գեղեցկութեան և այս կատեգորիայով չէ կարող յաղթել նոր լեզուի իրաւունքին: Պատճառ, ագեղ երևեցածը չէ տանում ժամանակը, իսկ նոր լեզուն գնում է ժամանակի հետ զուգահեռաբար, ուրեմն նոր լեզուն ագեղ չէ: Սորա հակառակ գեղեցիկ համարվածը չէ թողնում ժամանակը, իսկ հին լեզուն վաղուց թողել է նա, ուրեմն նորա համար հին լեզուն գեղեցիկ չէ: Բայց բոլորովին աւելորդ է լեզուի վրայ նայել այնպէս ինչպէս մի այլ բանի վրայ, որ մեր ճաշակը փնտռում էր, առանց ուրիշ խորհրդի, միմիայն գեղեցկութեան համար: Գեղեցիկ պատկերի, գեղեցիկ արձանի վրայ նայելով կշտանում է մեր հոգու գեղասիրութեան քաղցը, բայց ոչ պէտքերի քաղցը. և ամեն բանից առաջ ե-

Թէ մենք պէտքի բաղքը չկշտացնենք, մեր գոյութեան հաւասարակշիռը կը թնքվի և այնուհետև ոչ Ռաֆայէլի Մագոննան կարող է փրկել մեր անձը և ոչ Բելվեդերեան Ափրոդիտէն:

Փարիզի տարադահնարքը, այն շռայլութեան հեղինակները, որ գրեթէ բովանդակ քաղաքակրթեալ աշխարհին հրովարտակ են տալիս այսպէս կամ այնպէս հագվիլ, իրենք իսկ կը թողուն իրենց գեղեցիկ համարված հանգերձը և կստիպվին փաթաթվիլ արջի մորթու մէջ, եթէ ընկնեն բւեռային սառուցների մէջ. Լուկուլլոսը, (որ այսօր գրեթէ հոմանուն է որկրամոլութեան) մեզ թըւում է թէ կը մոռնար իր համադամքը և անուշ կերակուրքը և փառաւորապէս կուտէր Մորթերի և ջրշունների եղը, եթէ ընկներ նոր Գրենլանդիու կամ թերևս Լաբրադորի էսկիմոսների մէջ, որովհետև ոչ փարիզեան տարադահնարը իր շորերով կարող էր ապրել արջային շրջանակի տակ և ոչ Լուկուլլոսը իր կերակուրներով նոր Գրենլանդիու կամ Լաբրադորի մէջ: Պարզ է թէ պէտքը նախնախորհ է բան թէ գեղեցկութիւնը, որովհետև կեանք չկայ, եթէ պէտքերը չհագացվին: Յրախ տակ ընկած մերկ մարդը էլ գեղեցկութեան չի նայիլ, միայն թէ մի բան գտնէ, որի մէջ պատսպարէ իր անձը ու չպաղի սատկած ձուկի պէս. բաղցածը էլ համին չի նայիլ միայն թէ ուտելիք գտնէ: Իսկ երբ մարդը հոգացել էր բոլոր էական պէտքերը, երբ այդ բոլորն ասում ենք հոգալով ապահովել էր իր կեանքը, այն ժամանակ միայն զարթնում են նորա մէջ միւս հոգեկան բաղքերը կամ ցանկութիւնքը, որոնց շատը դեռ անծանօթ ևս են շատ միլիոնների բայց այդ միլիոնները նոյնպէս ապրում են, ինչպէս ապրում են շատ նկարիչք, որ քսան երեսուն տարիներով Հռոմ են նստում սիրահարվելով անտիկեան գեղեցկութեան կամ ճարտարութեան:

Այս դրութիւնից պարզ տեսնում ենք, թէ ինչ աստիճանի տղայական է լոկ գեղեցկութեան խնդիրը, լեզուի խնդրի մէջ, որ ծառայում է մարդու բովանդակ կեանքին, բոլոր պէտքերին միահամուռ, և ոչ մասնաւորապէս այս կամ այն հոգեկան ցանկութեան:

Ուստի ամենայն իրաւունքով հարցնում ենք. հին լեզուի

գեղեցկութիւնը, թերևս թոյլ տալով այս, հերիք պատճառ է, որ նորան գերի լինելով նորա վրայ սիրահարվելով, անմշակ թողունք, կամ, ուրիշ տակ կոխկռտենք մեր նոր լեզուն որ ինչքան էլ տգեղ լինի հնից, թերևս այս էլ թոյլ տալով, այնուամենայնիւ այսօրվայ օրս մեր բոլոր պէտքերը նա է հոգում մեր համար. իսկ հին լեզուն հիմկվայ հայի համար դարձել է Փարիզեան տարազահարի շորը, արջային շրջանակի տակ, կամ Լուկուլլոսի կերակուրը նոր Գրենլանդիու կամ Լարրադօրի մէջ՝ Ասենք թէ մեռած մայրը գեղեցիկ էր, բայց այս իրաւունք տալիս է մեզ սպանել նորա թէև տգեղ զաւակը, Ասենք թէ մեր նախնիք շատ ազնիւ կերակուրներ են կերել, բայց որ այսօր մենք չենք կարող ուտել և մարսել այն կերակուրքը, իրաւունք է, որ նախնիք մեր մի կտոր չոր հացը, որին սովորել է մեր ստամոքսը և որ հազար նեղութեամբ պահպանել էինք մեր և մեր զաւակների կենդանութիւնը ապահովելու համար. Ո՞րը աւելի շուտ կարող է մեզ կշտացնել մեր առողջութիւնը պահպանել մեր ունեցած չոր հացը՝ որ ուտվում է, թէ այն շատ ազնիւ համարված բանը, որ թէև կերել են նախնիք, բայց մենք չենք կարող ուտել:

Չենք ուզում ասել, թէ երթանք Խալիս և իտալացոց ստիպենք թողուլ իրենց լատիներէնի յարաբերութեամբ աղճատ լեզուն ու խօսել հին հռովմէական գերապանծ լեզունով, կամ Փլորետացուն ստիպել, որ Դանթէի «Աստուածային կատակերգութիւնը» լատիներէն թարգմանէ ու կարգայ Եւ չենք ուզում միմիայն այն պատճառով, որ մեր ցանկութիւնն է այս գործի մէջ այնպիսի փաստեր և օրինակներ հանդէս հանել, որ, աւելի իրական աշխարհին պատկանելով, շօշափելի էին նաև լոկ գիր կարդալ գիտնալով մեր գրածը կարգացողին: Այս պատճառով ասում ենք. երթանք Խալիս, և այնտեղ իտալացոց, որ պիտի պահպնէին իրենց ընտրած աղջիկների հետ, ասենք. — Թողէ՛ք դորանց, տգեղ են, չունին այն ազնիւ և վերին գեղեցկութիւնը, ինչպէս էին ձեր նախնի մայրերը, որոնց պատկերքը և արձանները դուք ամեն օր տեսնում էք Վատիկանում: Տեսէ՛ք միւշէ անգամ Միքէլ Անջելօյի ձեռագործքը, ինչպէս գեղեցիկ են, ինչպէս կատարեալ. ո՞րքան ներդաշնակութիւն կայ որքան

դուգապատշաճութիւն, ի՞րբան շնորհք, ի՞նչ ճարտարութիւն, և այլն և այլն — Խելքդ ի՞նչ է կտրոււմ, կը գտնե՞ս մի հատ իտալացի, որ թողուր իր հարսնացուն, միմիայն այն պատճառով, որ նմանութիւն չունէր քո ցոյց տուած հոյակապ արձաններին: Ա՛հ որ կասեն բեզ. — պարոն, մեզ կնիկ է հարկաւոր ներկայուամ, իսկ մեր գեղեցիկ նախամարքը ապրեցան և մեռան երկու հազար տարի առաջ, և մեզ այս սերունդը թողեցին, որին այժմ դու չես հաւնում: Եթէ մենք էլ քո խելքին ընկնենք, ասել է թէ առանց կնիկ պիտի մնանք, որովհետեւ ներկայ աղջիկները դժբա են որ կան և դոցանից ուրիշ էլ չկան: Բնութիւնը և ընկերական կեանքը կնիկ են պահանջում, կենդանի, շարժուն, ջերմութիւն և երակներու արիւն ունեցող էակներ: Այն բարեղէն, մեռած, անշարժ, սառը արձանները, որ մեզ ցոյց ես տալիս, թէ և այո՛, գեղեցիկ են, բայց ի՞նչ օգուտ, որ ընկերական կեանքում չեն կարող մեր պէտքերին ծառայել: Միմիայն նա. յելով նոցա սառը և անկենդան գեղեցկութեան վրայ, կամ զարմանալով քանդակագործի հանճարեղ ճարտարապետութեան վրայ, բնութեան հարկը չէ վճարվում, մեր տունը չէ կառավարվում, մեր այգիքը չեն մշակվում, մեր կերակուրը չէ եփվում, մեր շորերը չեն կարվում կամ լուացվում: Կարո՞ղ ես, կրկնում ենք, գտնել գոնէ մէկ մարդ, որ լսէ բեզ և վերացական գեղեցկութեան սիրահարվելով իրական աշխարհի պէտքերը, այո՛, և իր մարդկային կոչումը ուրանայ:

Մենք վերեւը աւելորդ համարեցինք լատին լեզուի առաջարկութիւնը, մանաւանդ այն պատճառով, որ նոյն բանը, նոյն առաջարկութիւնը կարելի է առնել և հայ մարդուն, որ նա խօսի Խորենացու կամ Եղիշէի ոճով ու լեզուով: Յայանի է թէ ներկայ հայի համար անհնար է այս, որովհետեւ նա չգիտէ այն ձև ու ոճը, նոյնպէս անհնար է և իտալացու համար, որովհետեւ լատինախօսութիւնը վաղուց արդէն թաղված պրծած է հռովմէական ֆօրումի և կապիտալիզմի աւերակների տակ:

Ո՛վ չգիտէ Բենվենուտա Չելլինու հոյակապ նստոյցների ¹⁾ արժանաւորութիւնը. յայտնի է թէ եւրոպական մուզէոնների և անտիկասէրների համար շատ բարձր գին ունին:

Բայց չնայելով սորա վրայ կարող ես իբրև դրամ գործ դրնել նորա մեղալիոնները: Բազար որ տանիս, շինականը բեզալիւր ու եղ կը ապ, որ բերես բո զաւակները կերակրես: Թէ որ մի ընկերութեան մէջ փարայի և գոռի սիքան ընդունում են և ճանաչում են, ու Ձեզինք հրաշալի գործերի համար բեզ հաց չեն տալիս, ո՞րը կարող է բո պէտքերին ծառայել, Բենվենուտտո Ձեզինք մեղալիոնները, թէ փարան կամ գոռը:

Ասենք թէ ես պատկուած եմ, կնիկս շատ էլ տգեղ է, գիտեմ, բայց երբ որ իմ կեանքը նորա կեանքի հետ անբաժանելի կապերով կապված է, երբ նա իմ զաւակների մայրն է, իմ տան կառավարիչը, ինչպէս ես կարծում, ես դուրս կըձգեմ նորան, երբ գաւ ու բարոզես ինձ մէկ կողմից նորա տգեղութիւնը, միւս կողմից ճշայն աշխարհի փափկասուն տիկիներին գեղեցկութիւնը: Ասենք թէ խելագարվեցայ և դուրս ձգեցի, դորանով ինչ կըշահվեմ, այն փափկասուն տիկիները կը կենդանանան, որ քան իմ պէտքերին ծառայեն: Իսկի առասպելի մէջ, Շամիրամը իր թախսմաներով և Առլեզներով չէ կարանում Արայի նոր անշնացած դիակը կենդանացնել, ես երկու հազար կամ երեք հազար տարվայ մեռած գնացած կանայք՝ պիտի կենդանացնեմ և այն այս իրական աշխարհում, այս անողորմելի դարում, որի թագաւորը չէ մի որպիսի և իցէ քնաբեր նանիկ, այլ այն արգասաւոր սկէպտիցիզմը, որ վերցնում է մարգիային մտքի ամլութեան նախատինքը:

Հեռու ենք մենք մեր այս գործը այս տեսակ օրինակների շատութիւնով բեռնաւորելու դիտաւորութիւնից, որովհետեւ աշխարհի երեսին ոչինչ այնքան շատ չկայ որքան մի բնական երևոյթի կամ իրողութեան օրինակ, բացի սորանից այն բանը ինչ որ անցել է մեր լեզուի գլխից, ո՞ր ազգի լեզուի գլխից չէ անցել: Հաւաքել այդ բոլորը և նոցանով խճողել ու հաստացնել մեր աշխատութեան փորը ձանձրալի է թւում մեզ և կարծում ենք որ ընթերցողք ևս իրաւունք կունենային ձանձրանալու: Բայց մի բանի օրինակ հարկ եղաւ դնել, որովհետեւ չկամեցանք չոր դրութիւններով միայն շատանալ: Բայց այս օրինակները դրինք, ոչ թէ խոստովանելով հին լեզուի դրական գեղեցկութիւնը կամ նորի դրա-

կան տգեղութիւնը, ոչ. այլ միայն թոյլ տալով և թոյլ տալուց ետքը նոյն իսկ օրինակներով մեր դրուութիւնը պաշտպանելու և հակառակ կարծիքները շօշափելի փաստերով մերժելու համար, Խելքը գլխին մարդը աեհնում է պարզ, որ հին լեզուի իրաւունքը, երբէք աւելի չէ նոր լեզուից, հին լեզուն աւելի գեղեցիկ չէ քան թէ նորը, հին լեզուն աւելի ուժով չէ քան թէ նորը, թէև սա հին լեզուի և հարկւում մասի չափ էլ մշակված ու գործածված չէ: Խոստովանում ենք, որ նոր լեզուի մէջ կան թերութիւնք կամ ճապաղութիւնք. աւելի իրաւունք կար զարմանալու, եթէ չլինէին դոքա, որովհետև այդ լեզուն մինչև այժմ գրի տակ ընկած չլինելով և չմշակվելով, բնականապէս պիտի ունենար այդ թերութիւնքը: Բայց հին լեզուն նոյնպէս չունի իր թերութիւնքը: Նորա մէջ կան բառեր ձևեր, որ նորի մէջ չկան, որովհետև շատ այդպիսիների գաղափարքը պէտքերի հետ միասին կորած են և չկան ներկայ Հայի համար. բայց և նոր լեզուն ունի իր կենդանի և շարժուն ձևերը ու ոճերը, որպէս ներկայ գաղափարների և պէտքերի յայտարար, որ հնումը չկան: Եւ ինչով կըտաշվին կրկովին նոր լեզուի պակասութիւնքը, եթէ ոչ մշակութեամբ, և գրի տակ ձգելով, ինչով կը սահմանափակվեն նորա ճապաղութիւնքը, ինչով կաղնուանան նորա ձևերը և ոճերը, եթէ ոչ ուսումնասիրելով այդ լեզուն, գործ գնելով նորան և օրէ օր աճեցնելով: Իրաւունք ունի Բէկոնը, միսչ ասում է ճկարդալը հարստացնում է մարդու միտքը, խօսելու մէջ վարժվելը յաջողագիւտ է անում նորան, իսկ զընը սորվեցնում է ճշտութիւն: Իրաւ որ կենդանի խօսքը աւելի ճապաղ է քան թէ գրութիւնը, որ աւելի քիչ խօսքով իմացնում է նոյն գաղափարը: Յայտնի է թէ նոր լեզուն ապաստան անալով միմիայն հասարակ ժողովրդի բերնին պիտի ճապաղ լինէր ընդհանրապէս, որովհետև գրի մէջ չմանելով ճշգրտած և սխմված չէին նորա ձևերը կամ ոճերը:

Կարող են մեզ ասել թէ մինչև այժմ մեր բերած վրկայութիւնքը և ապացոյցքը աւելի վերաբերվում են այն խնդրին, թէ ո՞րը պիտի նախընտիր համարենք հին, թէ՞ նոր լեզուն, քան թէ այն պատճառներին, թէ ինչու համար չէ կարելի առաջ տանել նոր լեզուի մշակութիւնը հին

լեզուի ազդեցութեան ստրկանալով:

Բայց սորա ընդդէմ մենք ասում ենք, որ Հին լեզուն նորից նախընտիր, գեղեցիկ և մշակված համարվիլը շատ պինդ կապված լինելով նոր լեզուն բռնաբարելու և հնի ազդեցութեան ստրկացնելու անխորհուրդ ձգտողութեան հետ, այո՛, մեր փաստերը երկու խնդրի ընդդէմ ևս կարող են գործ դրվել: Որովհետև եթէ Հին լեզուն նախընտիր համարելով նորը անարգելը և ոտնակոխ անելը նմանում է կենդանի զաւակը սպանելու, այն պատճառով, որ նորա մեռած մայրը աւելի գեղեցիկ էր, նոյն այն Հին լեզուի գեղեցկութեան պատճառով նոր լեզուն էլ բաշխուել և ժողովրդի իրաւունքը բռնաբարելով, կենդանին մոռելի հետ պատանքելը, նմանում է այն բանին եթէ, տեսնելով որ նորածին բայց կենդանի մանուկի բիթը աւելի երկայն է քան թէ նորա մեռած մոր բիթը, մաածող լինի կարել դանակով աւելորդ երկայնութիւնը, կամ եթէ կարճ է, ազցանով բաշելով երկարացնել, որ միաշափ լինի մոր բիթի հետ, նոյնպէս և միւս բոլոր անգամները կամ գոյնը: Պարզ է թէ այսպիսի գործողութիւնք նորածին մանուկի կազմուածքի վրայ, անշուշտ մահաոխիթ են. և եթէ մահ էլ չպատճառեն, ապա ուրեմն պիտի համաձայնել, որ աւելի այլանդակում են մանուկի կերպարանքը քան թէ գեղեցկացնում, պատճառ, բնութեան անբռնաբարելի իրաւունքի վրայ չէ կարելի անպատիժ ձեռք բարձրացնել:

Յայտնի է թէ, մանուկը, բնականապէս, պիտի աճէ և զօրանայ այն կերպարանքի տակ, ինչ կերպարանքով ծնել է իր մօրից, կրթութիւնը և դաստիարակութիւնը պիտի օգնեն նորան, որ նա դառնայ ընկերութեան պիտանի անդամ: Բայց իր մօրը նման չէ, կամ այնպէս գեղեցիկ չէ: Այս խնդիր չէ, այլ ցնորբ: Կարող է նա իր մօրը չնմանելով աւելի գեղեցիկ լինել իր տեսակի մէջ, երբ նորա կազմուածքը պնդանայ և ծաղկի. կարող է նաև գեղեցիկ չլինելով, իր ընդունակութեամբ և լուսաւորութեամբ հարիւր անգամ նախընտիր և հարիւր անգամ պիտանի լինել քան թէ նորա մեռած մայրը: Այսպէս ևս նոր լեզուն չպիտի ստրկանայ հին, այլ պիտի մշակվի ինքնուրոյնաբար: Բող նա ներկայ մեր պէտքերին անհրաժեշտ ընդու-

նահուծիւնը և ձգականութիւնը ունենայ, մենք գեղեցկութեան ճարտարապետից կամ սիրողից կը խնդրենք, որ իր չափը ծոցը դնէ, որովհետեւ նորը ընդունակութիւն և ձգականութիւն ստանալով պիտի և նոր չափով չափվի, մեր հընասէրի չափը նորա համար կամ կարճ է կամ երկայն:

Բայց, լսում ենք, այստեղ բարձրանում են ձայները, թէ ընդ լեզուն առաջացել է տաճկական տրամաբանութեան տակ, և եթէ նորա մշակութիւնը առաջ չտարվի հնի աղբեցութեան ստրկացնելով, այն ժամանակ էլ հայկաբանութիւն չի մնալ այլ սոսկ տաճկաբանութիւն և այլն և այլն:

Խոստովանենք, թէ նոր լեզուի տրամաբանութիւնը, շատ մօտ է տաճկական լեզուի տրամաբանութեան, նոր լեզուի բաղդասութիւնը շատ տեղ գրեթէ նոյն է տաճիկ լեզուի բաղդասութեան հետ. բայց ինչ կանես, երբ բոլոր ազգից այդ տրամաբանութեամբ և այդ բաղդասութեամբ է խօսում: Մոռցնել նորան այդ բոլորը և քաշել տանել հին լեզուի տրամաբանութեան տակ, համազօր է հին լեզուն բարոյեցելու, որ իր կարգով համազօր է մարդկային կենդանի խօսքը ուրանալու: Այն մարդը որ մի անգամ հիմնաւորապէս հասկացել է լեզուի խորհուրդը, նորա պաշտօնը, այնպիսին, երբէք չէ կարող այսպիսի ոչինչ բաների առջև ընկրկիլ: Ինձ հարկաւոր է, որ իմ միտքը առջևիս կանգնած մարդը հասկանայ, ես գործ դնելով նոր լեզուն, կատարելապէս հասնում եմ իմ նպատակին, և այն մարդը հասկանում է իմ միտքը: Բայց ձևերը և տրամաբանութիւնը մօտ է եղած տաճկականին, ինձ ինչ փոյթ. կամ ինչ օգուտ իմ բուն հայկական ձևերով իմ հայկական տրամաբանութեամբ խօսելուց, երբ լեզուն այն ձևերի տակ զրկվում է իր խորհրդից և չէ կարում վարել իր պաշտօնը, երբ խօսողը չէ հասնում իր նպատակին, որովհետեւ նորա խօսակիցը չէ հասկանում նորա միտքը այն ձևերի տակ: Ցաճկական տրամաբանութիւնը կամ բաղդասութիւնը, նոր լեզուի վրայ ոչ Մարկոսը պատուաստեց և ոչ Կիրակոսը. բնութիւնը, պատմական դէպքերը և հազարամայ ժամանակները առին նորան այն ձև ու կերպարանքը. կարո՞ղ ես անցած գնացած բաների ընդդէմ պատերազմել. կարո՞ղ ես բնութեան ընդդէմ ճակատ ճակատի պատերազմել: Այս տեսակ ձգտողութեան տէր մարդիկը, եթէ ուրիշ բան չգիտեն, գոնէ պիտի ենթադրել, որ Աստուածաշունչ

կարդում են, մենք էլ այս պատճառով դիմում ենք դէպի նորա
օգնութիւնը: Ինչի՞ համար լորը և մանանան թողած, Եգիպ-
տոսի սոխ ու սխտորն էր յիշում Իսրայելը. յայտնի է թէ մեզ
ամեններին համար, մեր ներկայ հասկացողութեան և ճաշակի
համար աւելի ազնիւ և աւելի նախընտիր են լորը և մա-
նանան քան թէ սոխը և սխտորը: Պատճառը շատ պարզ է.
որովհետեւ Իսրայելը դարաւոր ժամանակներով Եգիպտոս մը-
նալով ընտանացել էր եգիպտական բնութեան, նորա ճաշա-
կը և հասկացողութիւնը գոյացել և զարգացել էին այն
բնութեան ազդեցութեան տակ և այժմ մեզ նախընտիր հա-
մարված լորը և մանանան չէին կարող բռնել նորա հա-
մար Եգիպտոսի սոխի և սխտորի տեղը: Կարող ես քո
կամքով կամ սենեակիդ մէջ թուր շողացնելով պատգամ
տալ Ծ միլիոն ազգիդ, որ նա թողու իր սովորական ձեւ
ու ոճը ու առնու կամ հպատակի հին լեզուի ձեւին, ոճին,
կամ տրամաբանութեան: Եթէ ցերեկը ամպը և գիշերը
կրակէ սիւնը, եթէ Եհովայի որոնները Սինայի գլխից և
Մովսիսի պատուէրները այնքան ազդեցութիւն չունէին մի
խումբ Իսրայելի վրայ որ նա ամեն օր չիշէր Եգիպ-
տոսի շօշափելի աստուածները, եթէ այս բոլորը՝ հե-
րիք չէին նաեւ Ահարոնի համար, որ նա ոսկեղէն հորթը
չձուլէր, քո հրամանը կամ պատգամը կարծում ե՞ս թէ
տեղ կը հասնի և Ծ միլիոն ազգիդ գլխին հին լեզուի տրա-
մաբանութիւնը կը հանգչի, ինչպէս Վերնատան հրեղէն
լեզուները: Մեղաւոր է Իսրայելը, որ Եգիպտոսի մէջ
անասնելի և շօշափելի աստուածների սորված լինելով,
չէր կարող հասկանալ մի անտեսանելի և անշօշափելի Աս-
տուած: Կարելի՞ է դատապարտել նորան, եթէ նորա հաս-
կացողութիւնը գոյացած և աճած լինելով եգիպտական
բնութեան, եգիպտական ատմութեան ազդեցութեան տակ,
գաղափար չունէր ազատութեան էական սկզբունքի մասին:
Յայտնի է թէ Եհովան շատ վաղ էր մի այդպիսի ժողովրդի
համար և այնքան վաղ, որ նաեւ հազար տարի ետքը իս-
րայելի խուռկները ծխում էին բարձրաւանդակների վրայ և
զոհերի ծուխը բարձրանում Բահալին և Աստարտին: Բայց
Հռովմայեցոց Պալեստինին տիրելու ժամանակները, Բահալը
և Աստարդը ունէին դարձեալ իսրայէլացի պաշտողներ,
յայտնի է թէ չէ. թէև այն ժամանակ Իսրայելը էլ ոչ

ամայն էր տեսնուում, ոչ սիւնը, ոչ Եհովայի կրակն ու բոցը ոչ Մովսէս կար և ոչ Եղիա: Ի՞նչ է պատճառը, որ Եգիպտոսից դուրս եկած օրից այնքան դարաւոր ժամանակներուում, ինչ որ չկարողացան արգելել Եհովայի, Մովսէսի և միւս մարգարէների աւտօրիտէտը, Իսրայէլը ինքը իրեն դադարեցաւ և խափանեց Բահայի և Աստարտի պաշտօնները: Յայտնի է թէ Իսրայէլական բնութիւնը յեղափոխութեան առկ ընկնելով այն դարաւոր ժամանակամիջոցում, Եգիպտոսի ազդեցութիւնը նորա վրայից կտրեց և դուրս հակառակ Եհովայի ազդեցութեան առկ ձեւով էլ չէր կարող տեսանելի և շօշափելի աստուածների հնազանդվիլ, որովհետեւ նորա իմացական հասակը բարձր էր այժմ բան թէ նաբուգոդոնոսորի վաթսուս կանգուն արձանը: Այս յեղափոխութիւնից էլ մինչև այսօր երկու հազար տարի անցաւ և այս երկու հազար տարվայ մէջ աւետարանի ձայնը Իսրայէլի անկանջից չկարուեցաւ, բայց նա ոչ միայն չկամեցաւ լսել այլ Մովսէսի բարոզած պարզ Եհովայի կրօնի վրայ պատուաւորեց նաև մարդադիր և ժողովական կանոններ, որ յայտնի են Թալմուտի անունով, որով տրամագծական հակադրութեամբ մանաւանդ հեռացաւ օտարացաւ Աւետարանի վարդապետութիւնից, և աւելի ևս բան թէ Մովսիսական կրօնը: Եթէ դարաւոր սովորութեան, բնութեան և պատմական դէպքերի ազդեցութեանց մէջ չփնտռենք այս բաների բուն պատճառը, ինչպէս պիտի հասկանանք և մեկնենք երևոյթը, որ լոկ բնական հետեանք են այն ազդող պատճառներին: Հեղեղը որ իջնում է սարից, կարգելվի, եթէ մտածես պատ քաշել նորա առջև և քո տունը այդ ճամփով փրկել: չէ՞ որ աւելի խելքի մօտ է խանդակներ փորել և հեղեղի յորձանքը այն սահմանի մէջ ուղղելով նորա ապականող և աւերող ուժից փրկվել: Բնութիւնը կրակ է, կայրէ կը մաշէ եթէ անմիջապէս և կոպտութեամբ վարվիս նորա հետ. բայց շնայելով սորա վրայ բնութիւնը անյաղթելի չէ, եթէ կարգով, ճամփով, դարձեալ բնական հնարներով ընդդէմ դուրս գաս նորան: Մինչև Ֆրանկլինի շանթարգելը, որ հազար տարի Մասիսի նման ապառաժ էլ դէմ անէիր կայծակին, կարող էիր քեզ ապահովել նորա հարուածից. բայց. անս, բնութիւնը դարձեալ զէնք տուեց քո ձեռքը. մի երկաթէ ձող է, բայց բորբոքված կրակի վը-

րայ ջուր ածելու պէս. նստեցնում է օդի ելեքտրականութեան գործունէութիւնը և ապահովում է բեղ և բո առնը: Ինչ է պատճառը, որ Մասիսի նման ապառաժի չկարողացածք կարողանում է մի չնչին երկաթի կտոր: Յայտնի է թէ Մասիսը դէմ դնելով կայծակին, միանգամ խելքիւ նստեցրել էիր, որ պիտի կարողանաս այն ահագին հսկայի ուժով յաղթել բնութեան, մինչդեռ բնութիւնը ծաղրում է նաև Հիմալայի, Չումալարի և Դաւալագիրի հսկայութիւնքը, ուր է մնում, նոցա հետ համեմատելով մեր մէկ թիզ Մասիսը, բայց երկաթը, որ դէմ ես անում նորան, այնտեղ քո խորհուրդը բռնանալ չէ բնութեան վրայ, այլ, ուղղութիւն տալ նորան և սահմանափակել նորա կարողութիւնը, որ իբրև ելեքտրականութեան լաւ առաջնորդ, կամուրջ է լինում օդի և երկրագունդի մէջ, այնպէս որ ատոմսների ելեքտրականութիւնը այն կամուրջի միջնորդութեամբ կը պչելով երկրագունդի ելեքտրականութեան հետ կապւում է և ուղղվում է դէպի երկրագունդի ելեքտրական կենդրոնը, որ նոյն պիտի լինի և նորա երկրաչափական կենդրոնի հետ, որովհետև ջերմութիւնը նոյնպէս աղբւր է ելեքտրականութեան, և որովհետև երկրագունդի կենդրոնը հալված վիճակի մէջ է իր անչափելի բարձրաստիճան ջերմութիւնից:

Եթէ Հայոց ազգը դարերով ստրկանալով Պարսից, Մոնղոլների, Սելջուկեան Թաթարների, Արաբացոց, Օսմանցոց, Եգիպտացոց, կամ դեռ չգիտեմ ինչացոց, այն պատմական դառը դէպքերի տակ ընկճված, մեռած ու հոգին բերանը եկած, չէր կարող բնական օրէնքի ազդեցութիւնը բերել իր վրոյից, չէր կարող չընդունել այն տիպը և կնիքը, որ այնքան դարերով, կրակով և բարձրաստիճան ճընշողութեամբ դրոշմում էին նորա փափուկ սրտի վրայ, եթէ նորա կեանքը ենթարկված էր այն ազգերի անպայման ազդեցութեան, միաբը, որ կեանքի հետ լծակից է, լեզուն որ մաքի յայտարարն է, ինչպէս կարող էին ազատ մնալ այն ազդեցութիւնից: Մի դէպ խոտ, մի բուռը հող դնում ես մէջ տեղը ու ետքը բոլոր աշխարհը ծածկում ես ջրհեղեղով, էլ խեղճ է այնուհետև պահանջել, որ խոտը չոր մնայ, կամ հողը չցրուի: Յայտնի է թէ, Հայոց ազգը դէպէնսեան բրդի կամ մովսիսեան մորենու սքանչելի որակութիւնքը չէր կարող ունենալ, որ ցօղը նորան չթրչէր կամ

կրակը չէր երևի Դեռ մեծ տղամարդու թիւն է Հայոց ազգի կողմից որ այնքան կարողացել է պահել, որ այսօր մեզ պէս, ազգի կորած շուարած որդիքը կարողանում են նորա կենդանի խօսքով երկու տող գրել: Այո՛, մենք շատ խոտեր գիտենք, որ այսպիսի ջրհեղեղներից փթեցան, շատ հողեր գիտենք, որ ցիր ու ցան եղան, որոնց անունն անգամ մոռացված է այսօր: Լա՛ւ է եղել, վատ է եղել, խնդիրը այդ չէ: Ամեն մարդ գիտէ որ այդ սոսկալի տարաբաղդութիւնը էին, զարհուրելի հարուածներ, սարսափելի փոթորիկներ, որ անցան մեր ազգի գլխից, բայց որ եղել են ու պատահել են և իրենց հետքն էլ թողել են ազգի կեանքի, նորա մօքի և նորա լեզուի վրայ, կարելի է այս բոլորը ուրանալ և բերել հանել: Ոչ որ ուրախ չէ, ոչ մէկիս սիրտը չէ փառաւորվում մեր յիշատակարանների կէսը արիւնոտ, իսկ կէսը դարաւոր արատսունքից բթթած թերթերը դարձնելու ժամանակ: Բայց ի՞նչ օգուտ, անցածը յետ կը գա՞յ:

Ե Ր Կ Ր Ո Ր Պ Է Ա Տ Ո Ւ Ա Ճ

Ալեքսանդրեան դպրոցի ծաղկեալ ժամանակը ըսնի վարդապետութիւնը ոչ զուր տեղը մինչև այն աստիճան էր հասուցած, որ մինչև անգամ և բրիտանոնութեան մէջ անկիւնաքար դարձաւ. Վսկղբանէ էր բանն և բանն էր առ աստուած և աստուած էր բանն. նա էր 'ի սկզբանէ առ աստուած, ամենայն ինչ նովաւ եղև և առանց նորա եղև և ո՛չինչ որ ինչ եղևն նովաւ կեանք էր:

«Ախ՛ լեզուն, լեզուն. լեզուն որ չըլի՛ մարդ ընչի՛ մամն կըլի՛ աղաղակում է Աբովեանը:

Եւ արդարև ըսնը աստուած է, արդարև ամեն բան նորանով է եղել, նորանով է լինում և պիտի լինի: Բնութեան ահարկու ուժերից յետոյ, որպիսի են ելեքարականութիւն, ջերմութիւն և այլն, լեզուն առաջին զօրութիւնն է որ յայտնվում է բնութեան մէջ՝ բովանդակված բարոյական աշխարհում: Լեզուն է ազգութեանց որպիսութեան և վիճակի յայտարարը: Չկայ աշխարհիս երեսին ազգ, որ բարբարոս լինելով լեզուն լինէր վսեմացած, չկայ նոյնպէս ազգ որ բաղաբազործվելով բարբարոս լեզուն ունենար: Պատճառ, սոքա երկուքը ևս կապակից են իրաք հետ և մինը չէ կարող առաջ երթալ առանց միւսին, մինը չէ կարող յետ մնալ և աւերուել առանց միւսին: Լեզուն

ըստ ինքեան մի աման է, որով մարդը թափում է իր միտքը իր նմանների մաքի մէջ. սա է այն կամուրջը որի վրայով կարող են աղաածքէն ընթացք ստանալ մտքերի առեւտուրքը: Անլեզու մարդու վիճակը, այսինքն մուշիկ արտատուելի վիճակը է ամենամեծ պատուհասը, որին կարող էր ներթափանչել մի մարդ: Կոյրը, միտարկում է լեզուով, ձեռքից և ոտքից ընկած մարդը միտարկում է լեզուով. պատճառ, լեզուի միջնորդութեամբ իր կարիքը յայտնելով մեր ձաւորին գտնում է իր համար օտար աչք, օտար ձեռք ու տաք: Սոսիք է չեն սոքա, որպէս կարող էին սպասաւորել նորա սեփականքը, բայց և այնպէս ի՞նչ համեմատութիւն կայ սոքա և մուշիկ մէջ: Այն թշուառը աչք ունի, ձեռք ու ոտք ունի և շատ անգամ մի առոյգ առողջութիւն ընդհանուր կազմուածքի. տեսնում է, շօշափում է, ճաշակում է, հոտոտում է, հետեւաբար և ամեն վայրկեան արտաքին աշխարհի տպաւորութիւնքը թափվում են նորա զգացողութեան վրայ. բայց, պիտի մնան նոքա այնտեղ, որպէս մի անելանելի վիրապում և պիտի մաշեն և չարչարեն այն դոհը, որ հնար չունէր դուրս թափելով նորանց թեթեւանալ իր բեռներից: Այս է գէթ այն ցաւը և թշուառութիւնը, որ նա զգում է, բայց սորանից աւելի թշուառութիւն կայ, որին թէև ներթափայ է նա բայց չգիտէ: Իմացական աշխարհը փակ է նորա դիմաց: Նա չգիտէ մինչև անգամ թէ ի՞նչ է ինքը, ի՞նչ պաշտօն ունի ամենաբարի բնութեան գոգում կատարելու, մինչև ժւր հասնում է իր նմանների (ոչ մուշիկների) կարողութիւնքը և ձգտողութիւնքը: Նա չգիտէ թէ ի՞նչ տեղից եկաւ և ուր է գնում: (Թէև այս բանը և շատ ուրիշների համար տակաւին գաղտնիք է, բայց գոհութիւն բնութեան, օրէ օր այդ անթափանցելի վարագոյրը անօտարանում է): Մուշիկը, մի փոքր աւելի լաւ է դրված բնութեան մէջ, քան թէ վերին աստիճանի կերպարանագործված կենդանիքը և այս է նորա էութեան գազաթնակէտը: Նորա համար չկայ բարոյական խնդիր: (Եթէ գիտեն սորանից աւելի թշուառ վիճակ, թող ասեն մեզ. մենք գոնէ, չգիտենք):

Բարոյական խնդիր... Ո՛ւր է դորա աղբււրը, միթէ գո՛ւրս է դա մարդկութիւնից, որ մուշիկ մարդ լինելով անմասն է նորանից: Բանն էլ այս է, որ մուշիկը բարոյապէս մարդ չէ. վերևն էլ ասացինք, մուշիկը է անբան կենդանին:

ըբ ամենակատարեալը. եթէ օրանգութանդի կամ կօրիլլի համար կայ բարոյական խնդիր ապա ուրեմն կայ և մօնջի համար. բարոյական խնդիրը կարող է լինել միմիայն լուսի մէջ, զև խաւար նմա ոչ եղև հասու՝ Կարծեմ աւելորդ էր ասել որ այս լոյսը լեզուն էր Բնական աշխարհի լոյսը ևս մի միջնորդ է, որ բնութեան մէջ, նորա ձեռքով կատարվին այս և այն պաշտօնակատարութիւնքը իսկ բարոյական աշխարհում լեզուն է այդ միջնորդը, որի սպասաւորութեամբ կատարվում են իմացականութեան պաշտօնակատարութիւնքը: Թէև մենք ընդհանրապէս կուսակից ենք փորձական և վերացական փիլիսոփայութեան, որպէս աւելի գրական տեսութեան բայց այս խնդրի մէջ բնաւ սխալ չէ և եղբակցականը և մենք առանց յողդողդվելու կարող ենք մի անհատի մի մօնջ մարդու տեղ առնուլ մի ամբողջ ազգ նոյնպէս զուրկ լուսից, նոյնպէս անծանօթ քաղաքագործութեան արդիւնքներին, նոյնպէս անլեզու վերաբերութեամբ նաև այնպիսի ըմբռնողութեանց որ առաջին աստիճանքն էին լուսաւորութեան, թո՛ղ վսեմ խնդիրները:

Նորա որ արդէն գուշակեցին, թէ ինչ էր մեր ասելիքը, տեսնում ենք որ քիթերը կախում են և երեսները թթուեցնում, բայց մի շտապէք բարկոծել մի մարդ, որ խօսում է այն ազգի մասին, որին ինքը ևս անդամ է ինչպէս նորա ընթերցողքը, մի դատապարտէք նորան, եթէ նա այն ծանր վճիռը դնում է իր ազգի վրայ, անկողմնապահ ճշմարտութեան անունով, պակաս էր նորա սէրը դէպի իր ազգը քան թէ ձեր սէրը, դժար թէ կարողանաք ապացուցանել: Բուն այն ճշմարիտ սէրը, որ չէ հնանում, որ չէ վախենում, բուն այն անխորտակելի շղթան որով բնականապէս կապված է նա իր ազգի հետ ստիպում է նորան խոստովանել այս արտասուելի ճշմարտութիւնը: Կարելի էր քարկոծել նորան այն ժամանակ եթէ նա սևը սև և սպիտակը սպիտակ խոստովանելով յանցանք համարէր սևին իր սևութիւնը որպէս նաև սպիտակին իր սպիտակութիւնը: Բայց որովհետև նա գիտէ թէ ինչ բնական օրէնքների ազդեցութեամբ երևում են այդ գոյները, և որովհետև այս գիտակցութիւնը չէ կարող թոյլ տալ որ նա դատապարտէ այդ գոյները, ուստի քանի որ նա ներկայ եղած ճշմարտութիւնն է խոստովանում, իրաւունք չունիք և չէք կարող նորան

քարկոծել առանց ստույգի և խաւարի պաշտօնեայ դառնալու: Սխալ է նորա տեսութիւնը՝ ապացուցէք: Բայց և ոչ այդ դիպուածում իրաւունք ունիք դատապարտել նորան, եթէ նա այդպէս էր ճանաչում իր հոգու կարողութիւնը լիամասն կերպով լարելով: Արդէն ըստ ինքեան արժանի է յարգութեան ամեն մարդ, որ առանց վարագուրելու և կեղծաւորվելու պարզապէս և որոշակի հրապարակ է հանում իր իմացական կարողութեան արդիւնքը: Եւ ամեն այդպիսի մարդ թէ և լինէր սխալված այնուամենայնիւ այնքան մեղաւոր է, որքան սեւ գոյնը իր սեւ լինելում: Ոչ միայն մեր ազգի մէջ, այլ նաեւ շատ լուսաւոր ազգերի մէջ, սրտի անխաղախ և անկեղծ խոստովանութիւնը չէ գտել տակաւին այն գնահատութիւնը, որ արժանի էր նորան միայն նորա անկեղծ և անխաղախ լինելու համար, թող նորա ուրիշ արժանաւորութիւնքը: Ո՞րքան սաստիկ է խաւարը, որքան հեռու է տակաւին մարդը, այն աստիճանից ուր միայն արժանի էր այս վսեմ անունին լիամասն կերպով: Խնդիր, որ զայրացնում է զգայուն սրտի վերքերը:

Ազգը բաղկանում է ընտանիքներից, ընտանիքը անհատներից: Ազգը ուրիշ բան չէ եթէ ոչ ժողով անհատների, որոնց մէջ կային հասարակաց բաներ, հասարակաց ըմբռնողութիւնը, հասարակաց ձև ու ոճ այդ ըմբռնողութեանց համար, թող յատկութիւնքը, որ շատ անգամ սխալ բան թէ ուղիղ, որպէս հասարակաց վերագրվում են այս կամ այն ազգին: Ուրեմն ազգը է մի մեծ ընտանիք, ուրեմն ազգը է մի մեծ և հսկայ անձնաւորութիւն: Այո՛, ազգութիւնը է մի վերացական անձնաւորութիւն և երբ չկար այդ անձնաւորութիւնը և ազգութիւնը չբացած էր: Այնուհետեւ ամեն բան ընկնում է բնութեան վերլուծիչ ազդեցութեան տակ. քայքայվում է կազմուածքը, ցնդում են նորան կազմող տարրերը: Հարկ չկայ ասել որ առաջին մահացուցիչ հարուածի հետ դադարում է և բարոյական խնդիրը: Սա չէ նմանում այն նիւթական տարրերին, որոնք կապված լինելով բնութեան օրէնքներով պիտի աստիճան աստիճան թողուին իրենց կերպարանքը, ո՛չ, բարոյական խնդիրը չբանում է ական թօթափել:

Ժամանակի հարուածը վաղուց արդէն հասուցել է մեր ազգին այս բարոյական մահը: Ի՞նչ մնաց մեզ անհատներիս հասարակաց ազգութեան անունով: Արօ՞ն. բանիսը հա-

շուեմ. լուսաւորչական, հոռմէական, բողոքական. լեզո՞ւ, և՛ աչքո՞ւ լոյս, ես էլ դորա բամակիցն եմ. ո՞ր է: Վերեմի մեր ազգը անլեզո՞ւ էն. — Դու ես ասումս ձեզու չէ՞ որով գրում ես այս առիւրը. — Ո՛հ, եթէ սա լինէր հասարակաց ազգի, ոչ սա այլ երկու աստիճան տակաւին սորանից ցած լինէր մի հասարակաց լեզու. գլուխս բարը կտայի էլ չէի խօսիւր ձե՛հ, հոգիդ դուրս գայ, այնպէս գրէ որ ամենքը հասկանան. — եկ դու գրէ «յդպէս, տեսնո՞ւմ ես, երբեմն արժանայիշատակ Թադեադեանցի ասածին պէս, ես ճշմարիտեբոս եմ թաթոռնումս. Ո՛հ, եթէ դու, և ով դու որ գուցէ մի պարոն որ մին ես, այլ և բո ծառան եթէ գտնէ այդ փիլիսոփայական բարը, ես ոչ չաշակերտիմ և՛ հետեւիմ» այլ և ո՞վսանայ, օրհնեալ եկեալ յանուն Տեառն» ասելով ծունկ կը չորեմ նաւ նորա առջևը: Պարոն, լեզուի խնդիրը ծանր խնդիր է և որքան ծանր այնքան վերագործ չափակցութեամբ, կարեոր: Եւ որքան կարեւոր, անհրաժարելի, նոյնքան և էլ աւելի երեսի վրայ ձգած: Ո՞վ է մեղաւորը: Անտարակոյս, ես, որ ասում եմ այս. իսկ նա, որ գո՛հ է ազգի վիճակից, որ կարծում է թէ նա առաջ է գնում, որ մոտծում է (եթէ կարող էր կատարել այս պաշտօնը) թէ ազգը սքանչելի լեզու ունի, բայց հեղինակների վատթարութիւնից միայն չէ հասկացվում ամբողջ ազգին, նա ե՛րբ կը լինի մեղաւոր: Բայց այն պարոնը, ասում ենք բաց ու համարձակ երկու տող չէ կարող գրել, որ հասարակաց լինէր հասկանալի, բովանդակելով իր մէջ արդի գիտութեանց վերջին խօսքը: Խօսել հազար ու միս մուրացած խառնուրդներով, խօսիլ կցկտուր, ճնճղուկի նման զոյգ ոտքով այս տեղից այնտեղ ուտելով և, այս ամեն սքանչելի յատկութիւններով, դեռ խօսել լոկ առանին խոշոր բաների մասին, կամ առևտուրի մասին, առանց համարձակվելու մօտենալ գիտութեանց, թող ներեն մեզ եթէ դորան լեզու չխոստովանենք:

Այսօր երկու գլխաւոր բարբառներ մեր լեզուի — Արարատեան և Պօլսի — լաւ ու վատ գործ են կատարում, թող նոցա ներքին բաղամասն ճիւղաւորութիւնքը, բայց արդեօք ուշագրութիւն լինվո՞ւմ է լեզուի մշակութեանը աշխատելով օրէ օր գնել նորան մի կարգի տակ: Կարգ ասելով չենք իմանում բացարձակաբար ստրկանալ հին լեզուին նորի անժխտելի իրաւունքները բռնաբարելով, որ բնաւ չէ արդարանում և որ

չենք կարող գովել, այլ մի տանելի ձև որ կարելի եղածին չափ մօտ մնալով և օրէ օր էլ աւելի մօտենալով ժողովրդին դառնար մի բանալիք լուսի դուռը բանալու համար:

Եւ դեռ հերիք չէր, եթէ այդ բարբառները առանձին առանձին առաջ երթային, լոկ իրենց շրջապատի վերաբերութեամբ, ոչ. մշակութիւնը պէտք է լինէր աւելի ազատ, աւելի բազմակողմանի, աւելի հեռատես օրէ օր այս երկու բարբառների ներքին կապերը միմեանց հետ անշմարելի կերպով պնդելով, ամրացնելով, օրէ օր այդ բարբառքը միմեանցից բաժանող պատի այս աղիւսը, այն բարը, միւս սիւնը խելով: Պիտի կարողանային այդ երկու բարբառքը երբ և իցէ իսպառ միանալ, այդ չենք համարձակվում պնդել, բայց այսքանը անմերժելի է, որ շատ և շատ կարող էին մօտենալ, այսքանը անժխտելի է որ առանց ընդհանուր մոտութեան լեզուի ունեւն երազ է հասարակաց ազգի առաջ գնալը: Բայց կրկնում ենք, այս շատ զգուշալի և նազիկ խնդիր է, որովհետեւ հեղինակը հերիք չէ որ պիտի օրէ օր իջնէր մինչև իր բարբառի տակը, այլ և մօտենար և միաւորվէր իր եղբօր հետ: Արդարև կրկին շարժողութիւն և ի՞ր առանցքի վրայ և դէպի միւս իր նմանը: Այս շարժողութիւնը, ես գտակս վեր եմ ձգում և այն ժամանակ կը համարձակվիմ այն աղօտ և գունաթափ լոյսը ընդունել որպէս ապագայի հրաշափառ արշալուսի կարագետը. չկայ այս, բուեր եկէք, եկէք, երթանք դարձեալ մեր աւերակների խաւար անկիւններում մեր գլուխը լալու:

Հատերը կը ծիծաղեն պարզամտութեանս վրայ, որ դեռ այդ երկու բարբառքն էլ բնաւ իրենց միմեկուրտի համար անգամ իսպառ հասարակաց դարձած չլինելով, նոցա միաւորութեան խնդիրն ենք բարձրացնում: Այդ խորիմաստ փիլիսոփային էլ խորհուրդ կը տանք, որ լաւ ուշադրութիւն անէ երկու իսպառ անմերձենալի կարծած բարբառներին: Բարբառների մի բանի արտաքին ձևերը չեն և չեն այնպէս անխորաակելի արգելք նոցա միաւորութեան, ինչպէս կարծվում է, առաջին անգամ ակը ապիս, կենդանի լեզուն հոսանուտ մի բան է և ամեն օր փոփոխութեան տակ, մենք մեր կարճ կեանքում և մեր արած փորձերից տեսնում ենք նորա յեղափոխութիւնքը: Իջնում են այդ յեղափոխութիւնքը մինչև արմատը, ազդում են հասարակ ժողո-

վրդի լեզուի վրայ. այդ բանը թէ և չէ նշմարուում մի քանի տարում, կամ չէ կարելի առանձին առանձին բնեւորով գտնել մի մեծ տարբերութիւն, բայց գումարի պատասխանը ստորասական է: Զկայ աշխարհիս երեսին բան որ բնութեան օրէնքներով չկատարվէր. ինչ որ այդպէս չէ սուտ է: Բայց որովհետեւ լեզուն իրողութիւն է և սուտ չէ, ուրեմն և ենթակայ է բնութեան օրէնքներին, իսկ բնութեան մէջ մենք տեսնում ենք որ մի փոքրիկ խմորսը որոշեալ պայմանների ազդեցութեան տակ խմորում է շաղախը, եթէ հացի և եթէ այլ բաների. անհնար է թէ լեզուն յեղափոխվելով ազգի աւելի առաջ գնացած մասին մէջ անփոփոխ մնայ միւս մասին վերաբերութեամբ, անհնար է թէ այդ յեղափոխութիւնը ազդեցութիւն չանէ, շատ կամ սակաւ այդ այլ խնդիր է, և կախվում է խմորոցի որակութիւնից, հասարակաց լեզուի վրայ:

Այս երկու հատուածը մենք հանում ենք հանգուցեալի աշխ. քերականութեան մեր ձեռքը հասած հատուկտոր թերթերից: Այդ քերականութիւնը, ինչպէս երևում է, կազմուած է եղել երկու մասից՝ բուն քերականութիւնից, որ հանգուցիալը հացրած է եղել մինչեւ բայերը, և ընդարձակ ներածութիւնից, որ վերջացած է եղել: Ներածութեան մէջ, ինչպէս երևում է մնացած հատուկտորից, հաւաքուած ու կարգի են բերուած եղել այն բոլոր մշտքերը ու դիտողութիւնները, որ ցրուած են նորա լեզուի մասին գրուած աշխատասիրութիւնների մէջ: Ներածութեան սկիզբը բալորովին կորած է համարում: Մեր ձեռքը հասել են միայն նորա սկզբնական տողերը, որ գրուած են մի կէսը պատռած թերթի վրայ: Աւելորդ չենք համարում բերել այստեղ այդ տողերը:

„Արդէն քանի մի տարի է, որ թէ ուրիշները եւ թէ մենք առիթ ունեցած ենք հայկական ժողովրդական լեզուի իրաւունքը պաշտպանելու և այս օրվայ օրս, գրեթէ անւերջ էր վերստին հանդէս հանել այս խնդիրը, եթէ մեր աշխատութիւնը յարակցութիւն չունենար նորա հետ: Առաջին անգամ մեր ժողովրդական լեզուն մամուլի տակ ընկաւ Թիւրքիոյ մէջ, բայց ահտը չէ մոռնալ, որ այն լեզուով գրուածների հեղինակքը կատարել էին այդ գործը ոչ թէ իրաւունք տալով ժողովրդական լեզուին, ոչ թէ խոստովանելով նի մահը, այլ ակամայ ու հարկից ջոնադատուած, որովհետեւ ժողովուրդը հինը չէր հասկանում: Թէեւ այս, նաեւ ակամայ գործողութիւնը, արդէն անարարաւ, բայց եւ այնպէս հզօր բողոք էր հին լեզուի ընդդէմ, որի մոռնութիւնը պաշտելի լինելով քանի մը հայագէտների սպանիական ֆանատիզմով քարոզվում էր տակաւին որպէս կամուրջ լուսաւորութեան: Ներկայ ներածութեան մէջ մենք առիթ կունենանք. քննել եւ քննել այս..... էական պատճառները: Ստոյգ է, ժողովրդական լեզուն դաբու.....“:

Այս տողերի գլխին գրուած է „Ներածութիւն“՝ խորագիրը եւ նշանակուած է գրելու տեղը եւ թիւը՝ „Ապրիլի 1. 1863.“:

Ե. ՇԱՀԱՋԻՋ.